

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեւանի նախանդի անցերը:—Համիսլամական ծրագիր եւ Երա իրազործման նպատաւոր հանգամանեներ:—Հայ զիւղացիների կրած վնասների մօսաւոր չափեր:—Դիմումներ Կովկասեան փոխարքային: Դեպուլին տռած լիազօրութիւնները:—Երկրագործութեան մինիստրութեան խափանումը:—† Կարապետ Եղեան:

Բագուի սարսափները, ինչպէս երևաց մայիս ամսուայ դէպերից, միայն նախերգանք էին մի արիւնահեղ ողբերգութեան, որի գործողութիւնների շարքը դեռ յալանի չէ թէ թը և ի՞նչով կը վերջանայ: Սակայն գժուար չէ հէսց այժմ էլ ողբերգութեան սկզբում, հասկամնալ այնքան զգուշութիւններով թափնուած համիսլամականութեան դիւային ինտրիգը, որի առաջին զո՞ր դարձաւ հայ ժողովուրդը. հայերի բնաշնջումը թուրք համիսլամականների վերջնական նպատակը չէ, ի հարկէ. հայը համարում է միայն առաջին խոչնդոս յաջորդ քայլերի համար: Յայտնի է պատմութիւնից թէ ինչ դեր է կատարել հայը մահմեղական տիրապետութեան անկման գործում Հարաւային Կովկասում. մոռացուած չեն և Թիւրքաց Հայաստանի դէպերը: Համիսլամականները լաւ գիտեն և այն, որ հայ ժողովուրդը ընդհանուր առմամբ ոռուասէր է: Եւ երբ Կովկասի նախորդ բարձր աղմինիստրացիայի սխալ քաղաքականութիւնը և թիւր տեղեկութիւնների հիման վրայ կայացած մի քանի կարգադրութիւնները, որ Կովկասի այժմեան փոխարքայի կողմից փոփիսելի յայտարարուեցին առաջ բերին յուզումներ հայ հասարակութեան մէջ, և այդ յուզումները թշնամացրին տեղական մի քանի պաշտօնեաններին հայերի դէմ—մեր համիսլամականները իսկոյն օգտուեցին ահա այդ նախատառ հանգամանքներից և սկսեցին իրագործել իրանց ծրագիրները նախ այն վայրերում, ուր հայ տարրը համեմատած շիա-թուրքերի հետ չնշին է և պոլիցիան կազմուած է մեծ մասսամբ թուրքերից: Հասկանալի է որ ամեն կերպ պէտք է համիսլամականները թագցնէին, սքողէին իրանց բուն նպատակները, մի տեղ կազմակերպուած ջարդեր առաջ բերելու անթունիս, 1905.

հրաժեշտութիւնը պատճառաբաներով «հայ կոմիտէտների» գույթեամբ, մի այլ տեղ՝ այս կամ այն մասնաւոր սպանութեան (մի բան որ միշտ եղել է շնորհիւ թուրք-թաթարական խառնուածքին) աշխատել են «աղդայնական հակառակութեան» բընաւորութիւն տալ, երբորդ գէպքում թուրք-թաթարական ամբոխը հանդիսացել է իբրև «ռուսական բեժիմի պաշտպան ընդդէմ ապրտամբ հայերի» և այն, և այն: Միշտ նախայարձակ, ցոյց տալով հայերին՝ համիսլամականները երեք թոյլ չեն տուել իրանց բացատրելու թէ այդ թէ նչպէս է որ հայը չի կպչում ոչ մի մահմեղականի մազին անգամ այն տեղերում, ուր հայ տարրը 70—80% է կազմում, իսկ թուրքերը չնչին թիւ են ներկայացնում, օրինակ Ալբանուրոպոլի, Ախալքալաքի, Նոր-Բայազէտի գաւառներում:

Համիսլամականները թուրք-թաթարական ամբոխը գրաւելու համար, բացի քաղաքական ծրագրների հեռանկարով, գըրգուում էին և նրա մէջ թալանի ախորժակը, ինչպէս և կրօնական ֆանատիկոսութիւնը, տարածելով ամեն տեսակ զրաբրտութիւններ հայերի մասին: Միւս կողմից անսպանիւ գործիչներից առանձին խելք չէր պահանջուում շահագործել և ամբոխային հոգեբանութիւնը ուսւ ժողովրդի և պաշտօնեանների որոշ խաւերում, քանի որ ամբոխային մտածողութեամբ՝ տեղական իշխանութեան այս կամ այն կարգադրութիւնից դժգոհութիւնը և այս կամ այն անձի դէմ մի քանի տաքզիլուխ հայերի թշնամական ցոյցերը իբրև թէ համահաւասար են ուսւ ժողովրդի դէմ տածած հակակութեան, սեպարատիստական փորձերին: Մոլորեցնելով թուրք և ուսւ ամբոխային կարծիքը, համիսլամականները օգտուեցին ուսւ-ճապինական անաջող պատերազմի շնորհիւ ստեղծուած խառն զրութիւնից և ձեռնարկեցին հայերին տնտեսապէս և բարոյապէս անբամալոյց անելու ծրագիրի գործադրութեանը: Թուլացնելով այդ տարրը, ըստ համիսլական լոգիկայի, խախուտ էր դառնուած և այն յենակէտը, որ ունի մահմեղական տիրապետութեան Մերձաւոր Արևելքում հարուած հասցնող պետութիւնը: Հայերի անտեսական ոյժը կենտրոնացած էր Բագու, հայ տարրը իբրև խոչընդուած աչքի էր ընկնում սահմանագլխի գաւառներում: Եւ ահա՝ նախ կազմակերպուեց հայկական կոտորած և հայի հարստութեան յափշտակութիւն Բագուում և, երբ առաջին փորձը աջողութեամբ պասկուց, սկըսուեց երկրորդ փորձի իրագործումը նախ Երևանում, անմիջապէս Բագուից յետոյ, ապա մայիսի 12-ից Նախճաւան քաղաքում և Կրկին անգամ Երևանում:

Պէտք է միամիտ լինել հաւատալու համար որ Ալի-  
աբաղի մի թուրքի սպանութիւնը կարող էր առաջ բերել  
այն ծաւալով կոտորածներ, թալան, հրկիզութիւն, բռնաբա-  
րութիւններ, սրբութիւնների պղծում և բռնի մահմեղականա-  
ցումներ, որոնց ականատես եղաւ քսաներորդ դարում ապրող  
հայութիւնը: Մինչև այժմ 50 հայ գիւղ է զոր գնացել շիա-թուր-  
քերի այդ ճիւաղային կատաղութեան: Նախճաւանի և նրանից հե-  
ռու գտնուող շատ գիւղերի վրայ յարձակումը եղել է միաժամա-  
նակ. յարձակուող թուրք ամբոխը կազմակերպուած է եղել «ինտե-  
լիգենտ» որոշ պարագլուխներից, որոնց անունները յայտնի են  
բոլորին: Միաժամանակ սահմանի միւս կողմից անցնում են  
զինուած և վարժ քիւրդ ճիւաւոր հրոսակներ, որոնք ընդհա-  
րում են ունենում նաև կանոնաւոր օօքերի հետ: Կոյր պէտք  
է լինել չտեսնելու համար նախօրօք կազմակերպուած ընդհանուր  
մի ծրագրի սիստեմատիկ գործադրութիւնը: Կրկնում ենք, մաս-  
նաւոր սպանութիւններ ամեն օր են եղել, ինչպէս 75 տարի ա-  
ռաջ, այնպէս էլ այն ժամանակամիջոցում, երբ Հարաւային  
կովկասը դուրս եկաւ խանների և փաշանների իշխանութեան  
ձեռքից և մոտաւ քրիստոնեայ պետութեան հովանաւորութեան  
տակ: Սակայն երբէք մասնաւոր սպանութիւնները առիթ կամ  
«մահանա» չեն եղել հայկական կոտորածներ սարքելու, հայ գիւ-  
ղեր հրկիզելու և թալաննելու, հայ եկեղեցիներ պղծելու, հային  
բռնութեամբ մահմեղական դարձնելու: Xl դարից սկսած, երբ  
առաջին անգամ մեր երկիրը կոխեցին թուրք-սելջուկեան վոհ-  
մակներ, հայը շատ է տեսել ամեն տեսակ անդժութիւններ, սա-  
կայն նա չէր կարող երևակայել անգամ որ Թողրով բէ-  
գերի, Զինգիկ խանների և Լենկթեմուրների օրերը կը կրկնուեն  
քսաներորդ դարում մի քրիստոնեայ պետութեան սահմաննե-  
րում... Եւ աներեսակայելին—այսօր արինուա իրականութիւն է,  
չնորհիւ մեր համիսամականների գիւղային նենդամտութեան և  
գաղանային բնագլների. քաղաքակրթութեան այդ թշնամինե-  
րը երբէք չէին կարող մոռանալ ծերունի Գլաշատոնի խօսքերը  
թէ «To serve Armenia is to serve civilization»: Եւ որպէսզի եւ-  
րոպական ցիվիլիզացիայի հարցը հայերի չնորհիւ մի ուրուա-  
կան չինի Կասպից ծովի ափերից սկսած մինչև Բոսֆորը՝ պէտք  
է բնաշինջ անել այդ տարրը, որ կղզիների նման ցրուած  
էր թուրք թաթարական ովկիանոսում: Ռուսական առաջնա-  
դացման դէմք առնելու համար պէտք էր ոչնչացնել այդ կղզի-  
յինակէտերը: Եւ ահա քանի դեռ չէին փոխուած հայերի հա-  
մար աննպաստ հանգամանքները կովկասում՝ պէտք էր շուապել...

Եւ մեր համիսլամականները այն աստիճան աճապարեցին որ երևան հանեցին իրանց ծրագրների ծայրերը...

Այժմ արեան և բոցի մէջ խեղդում են Նախճաւանի և Շարուր-Դարալագեազի հայ գիւղերը, մահմեղական խուժանի ձեռքով կատարւում են ճիւղային անգիտութիւններ հայ անզէն գիւղացիների վրայ: Ամենափոքր ընդդիմադրութիւնը հայ տարրի կողմից, ինչպէս օրինակ Երևանում, կատաղեցնում է թուրքերին և նրանք իրանց վրէժը հանում են Շարուր-Դարալագեազի և Նախճաւանի հայ գիւղերից: Այժմ իսպառ աւերուած կարող են համարուել այդ գաւառները և հայ տարրի տնտեսական քայլայումը պէտք է առաջ բերի սով. և այն վայրերից, որոնք նախապատմական ժամանակներից սկսած եղել են հայ բնագաւառներ, սկսուելու է դադի՞...

Եթէ արձանագրուին այն բոլոր բարբարոսութիւնները որ կատարել է թուրք խուժանը հայերի նկատմամբ—մենք կը տեսնենք որ դարերի ընթացքում այդ ցեղի անգութ և արիւնաբրու ինստինկտների մէջ ոչ մի փոփոխութիւն չի կատարուել. բաւական էր թուրքերը համոզուեին որ տեղական իշխանութեան կողմից արգելքների չէին հանդիպելու, որպէսզի հրեան գար իրանց գիւղին ծրագիրը իր ամենահրէշտաւոր արտայայտութիւններով:

Նախճաւանի և Շարուր—Դարալագեազի գաւառներում բոլոր վասուած գիւղերի թիւը, որքան յայտնի եղաւ լրագրներից, այժմ հասնում է աւելի քան 50-ի: Կարելի է, առանց չափազանցելու, միջին թուով իւրաքանչիւր գիւղում աւերուած համարել 100 տուն, որովհետև կան գիւղեր, որոնց տների թիւը մի քանի հարիւրի է հասնում և այդ գիւղերը այժմ հողի հետ են հաւասարեցրուած: Ուրեմն, առնուազը աւերած են 5000 հայ տուն իւրաքանչիւր տուն իր իրեղէններով, տնային անասուններով և այլն կարելի է գնահատել առնուազն 1000 ըուբի. հետևաբար հայ գիւղական տարրը այդ թուրք-թաթարական արշաւանքների շնորհիւ կորցըել է մօտ 5 միլիոն: Պատկերը աւելի ևս զարիւրելի կը դառնայ, եթէ դուք հաշուի առնէք սպանուած աշխատաւոր տղամարդկանց թիւը, փչացած ցանքուրը ու այդիները: Եւ այդքան սարսափելի կորուստներ իրեւ թէ կարող չէին առաջ գալ Ալիարադի մօտ պատահած մի ինչ որ թուրքի սպանութեամբ: Դա չարանենք անհեղեղութիւն է: Պէտք է երկար ժամանակ թուրք տղէտ, աւազակարարոյ և Փանատիկոս ամբոխը թունաւորել գիւղային զբարարութիւններով, մոլորեցնել նրա կարծիքը, խրախուսել այն համոզմամբ որ տեղական իշխանութեան հա-

ճելի բան արած կը լինեն, եթէ ոչնչացնեն հայ տարրը, իբր թէ յանցաւորները անպատիժ են մնալու ևայլն, որպէսզի առաջ գային այդբոլոր ծայրայեղօրէն վայրագ չարագործութիւնները։ Մարդ այնպիսի սոսկում է զգում որ նրա ուղեղի մէջ անհետանում է դարերի անջրպետք և նա սկսում է կարծել թէ ապրում է Թողրուլ-բէգերի, Զինգիզ-խանների և Լենկթեմուրների ժամանակներում։ Եւ այդ բոլորից յետոյ զանազան Աղայելներ ուղում են որ թագնուին սոսկալի ոճիրները, մատնանիշ չանուին չարագործութիւնները, հայը լոելեայն տանի այդ բոլոր խժդութիւնները...

Մեր երկրի նոր կառավարիչը, կոմս Վորոնցով-Դաշկովը, ժառանգութիւն էր ստանում նախորդ ըեժիմի բոլոր ցաւերը. տեղական ամբողջ աղմինիստրացիան և մանաւանդ պոլիցիան շարունակում էր զործել հին ուղղութեամբ այն ժամանակ, երբ փոխարքան իր գեվիզն էր դրեւ՝ «Երկրի խաղաղ բարգաւաճումը հասարակական ոյժերի աջակցութեամբ»։ Թուրքերի առաջ բերած մասային կոտորածներն և ամերմոնքը այժմ ստիպում են բոլոր ոյժերը կենտրոնացնել նախ և առաջ խաղաղութիւնը վերականգնելու մէջ։ Այդ խաղաղութիւնը եղել է և հայ աշխատասէր տարրի միակ իշէալը և նա պատուի, անձի և գոյքի ապահովութեան, ինչպէս և ազգային-կուլտուրական ազատ զարգացման մէջ է ամփոփում իր բոլոր բաղձանքները։ Ներկայ մոմենտում, երբ առաջն պահանջը արիւնհեղութիւնների առաջն առնելն է, կարծում ենք, հայ ժողովուրդի ցանկութիւններն են արտայայտում Փոխարքային ներկայացած մի խումբ հայեր, որոնց խնդրագիրը և այդ առիթով տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնը առաջ ենք բերում ներքենում։

Ցունիսի 2-ին։

L. U.

Հայկական պատգամատրութիւնը փոխարքայի մօտ

Չորեքշաբթի, յունիսի 1-ին, առաւօտեան ժամը, 10-ին, հայերից բաղկացած մի պատգամատրութիւն ներկայացաւ նորին պայծառափայլութեան կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին, Նորին Մեծութեան Փոխարքային կովկասում։ Պատգամատրութեան մէջ մտնում էր մի մասը այն ներկայացուցիչներից, որոնք հայ ազգաբնակութեան զանազան խմբերի կողմից հաւաքուելով Թիֆլիսում երկու ամիս առաջ, մշակեցին հանրագիր հայերի կարիքների մասին։

Պատգամատրութեան անդամներն էին. իշխան Ա. Բէհը բութեան, Պ. Ղամբարեան, Տ. Յովհաննիսեան, Ա. Քալանթար, Յ. Մպենդիարեան, Կ. Մտեփանեան, Ա. Խատիսեան. Պ. Յա-